

**Գանատայի Հայոց Թեմի  
Ազգային Երեսփոխանական 51/8րդ Ժողովը  
Աւարտեց իր Աշխատանքները**

Գանատայի Հայոց Թեմի 51/8-րդ երեսփոխանական ժողովը գումարուեցաւ անցեալ 21-23 Մայիս, 2009-ին, Գեմարիճի Ս. Նշան Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ եւ ընդ բարձր հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանին:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Թեմի բոլոր եկեղեցիներու Հոգեւոր Հովիւներն ու Ազգային Երեսփոխանները, որոնք ժամանած էին Մոնթրեալէն, Լաւալէն, Սենք Գաթրինզէն, Թորոնթոյէն, Վանգուվըրէն եւ տեղւոյն Գեմարիճէն: Ազգային Երեսփոխաններու կողքին հիւրաբար ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան Լիազօր Հաւատարմատար Նորին Վսեմութիւն Պրն. Արման Յակոբեանը, Ազգային Պատգամաւորներ, Կիլիկեան Իշխաններ, Ասպետներ, Մետրոպ Մաշտոցի Շքանշանակիրներ, Հոգաբարձուներ, քոյր կազմակերպութեանց ներկայացուցիչներ, որոնց կարգին էին՝ ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէն եւ ՀՕՄ-ի ու ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութիւնները, ինչպէս նաեւ 30 աւելի երիտասարդներ Գանատայի զանազան շրջաններէ:

Ազգային Երեսփոխանական Ժողովը՝ Նախագահութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի, սկսաւ իր օրակարգերու գործադրման Հինգշաբթի կեսօրին որուն դիւանի ատենապետ ընտրուեցաւ Պրն. Րաֆֆի Տօնապետեան իսկ քարտուղար Տ. Գեղարդ Վրդ. Բիւսպէկեան: Ժողովին իր Հայրական Պատգամը ուղղարկած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը:

Ժողովը քննարկեց Թեմիս Կրօնական եւ Բաղաքական ժողովներու տարեկան միամեայ գործունեութիւնները: Յատկապէս անդրադարձաւ «Երիտասարդութեան Տարի»ի նախաձեռնութիւններուն որ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը 2009 տարին հռչակած էր «Երիտասարդութեան տարի» եւ Արցախի մէջ կառուցուելիք «Նոր Կիլիկիա» գիւղի ծրագրին: Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան զեկուցեց ցարդ կատարուած Զրիստոնեական Հոգատարութեան Աշխատանքներուն մասին, իսկ Հոգեբոյժ Վահան Գույումճեան որ հրաւիրուած էր Նիւ Եորքէն խօսեցաւ Գթասրտութեան եւ Հոգեւոր Խորհրդատուութեան մասին:

Ժողովի աւարտին տեղի ունեցան Ազգային Վարչութեան ընտրութիւնները: 2009-2010 տարեշրջանի կազմի անդամներն են.- Կրօնական ժողով՝ Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, ատենապետ, Տ. Գառնիկ Զինյ. Գոյունեան, ատենադպիր, Տ. Հրայր Ա. Զինյ. Նիկոլեան, խորհրդական: Բաղաքական ժողով՝ Բժիշկ Ժան Առաքելեան, ատենապետ, Բժիշկ Կարայիս

Հարպոյեան, փոխ-ատենապետ, Պրն. Ռաֆֆի Տեր Պողոսեան, ատենադպիր, Պրն. Լեւոն Պոյաճեան, գանձապահ, եւ Բժիշկ Պարոյր Թուխմանեան, Պրն. Գրիգոր Գույումճեան, Պրն. Սիմոն Փոլատեան եւ Տիկիներ Աննա Պուկարեան եւ Օսիկ Մխսի-Արթինեան՝ խորհրդականներ:

### **«SPIRIT OF ARMENIA»**

Հիգշաբթի երեկոյեան, Ս. Լշան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Spirit of Armenia» գնահատագրի տուչութիւնը որուն արժանացաւ Հայութեան տարիներու բարեկամ եւ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման իր նեցուկը բերած Ազատական կուսակցութեան նախկին ղեկավար՝ Պրն. Սթեֆան Տիոն:

Պրն. Տիոնը ներկայացուց Թեմիս երիտասարդ անդամներէն Յակոբ Մխսի-Արթինեանը: Իր խօսքին մէջ ան շնորհակալութիւն յայտնեց Պրն. Տիոնին՝ հայ գաղութին իր ցուցաբերած շարունակական զօրակցութեան համար եւ յատկապէս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացին:

Երեսփոխան Սթեֆան Տիոն իր խօսքին մէջ արտայայտեց իր երախտագիտութիւնը եւ յայտնեց թէ, «Ես այսօր հոս կը գտնուիմ որպէս բարեկամ եւ որպէս Գանատացի որ իր կեանքը լիովին տրամադրած է երկրագունդի ոլորտային հարցերուն եւ խաղաղ ապագայի մը համար եւ Հայութիւնն ու Հայաստանը զիս կը խրախուսէ այս զուգորդութեան մէջ եւ այդ պատճառով իսկ միշտ երախտապարտ կը զգամ ձեզի եւ շնորհակալ եմ այս պատիւին համար»:

«Spirit of Armenia» շքանշանը կը տրուի ոչ-հայ անհատներու որոնք կը ցուցաբերեն յատուկ բարեկամութիւն եւ ծառայութիւն՝ հայութեան եւ հայութիւնը շահագրգռող հարցերու առնչութեամբ:

### **«Տարուան Անձնաւորութիւնը» Պատուագիր**

Առաջին անգամ ըլլալով, Գանատայի Հայոց Թեմի «Տարուան Անձնաւորութիւնը» պատուագիրը ներկայացուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի ճաշկերոյթի ընթացքին որ տեղի ունեցաւ Ուրբաթ, Մայիս 22-ի երեկոյեան եւ անոր արժանացաւ Գանատահայ Փրոֆ. Իզապէլ Գաբրիէլեան Չըրչիլը: Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեան Փրոֆ. Չըրչիլին յանձնեց Բարձրբերդի Աւետարանը:

Փրոֆ. Իզապէլ Գաբրիէլեան Չըրչիլը պատմաբան է եւ իր մասնագիտութիւնը կը կայանայ գաղթականութեան եւ փոքրամասնութիւններու մասին: Ան շարք մը հրատարակութիւններու կողքին, հեղինակած է «Like our Mountains» հատորը ուր կը ներկայացնէ Գանատահայութեան պատմութիւնը եւ կը կեդրոնանայ Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած հայ գաղութի կազմութեան մասին:

## **«Երիտասարդութեան Տարի»**

Ազգային Երեսփոխանական Ժողովի օրակարգին մաս կը կազմէր նաեւ Հայ Եկեղեցւոյ եւ Երիտասարդ սերունդի հոգեմտաւոր հոգաձուլութեան հարցը: Ժողովին մասնակից երեսուներեւ աւելի երիտասարդները յատուկ աշխատանոցով մը ներկայացուցին իրենց ակնկալութիւններն ու առաջադրանքները: Աշխատանոցը վարեց Թեմիս Զրիստոնեական Դաստիարակութեան Վարիչ՝ Տ. Գեղարդ Վրդ. Զիւսպէկեանը, նիւթ ունենալով Հայ Երիտասարդը եւ ներկայ աշխարհի մարտահրաւերները:

### **Ազգային Երեսփոխանական Ժողովի Պաշտօնական Ճաշկերոյթ**

Ճաշկերոյթը հովանաւորուած էր Թեմիս Բարեջան Առաջնորդ Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի կողմէ, կազմակերպութեամբ տեղւոյն եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց Յանձնախումբին: Ճաշկերոյթի նախագահութիւնը ստանձնած էին՝ Չոհրապ եւ Մայք Թիթիզեանները եւ անոնց ընտանիքները: Ճաշկերոյթին ներկայ էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան Լիազօր Հաւատարմատար Նորին Վսեմութիւն Պրն. Արման Յակոբեանը:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւն բերին Մարինա Կարապետեանն ու Ժագ Թիւթիւնճեանը եւ Նուպար եւ Կարինէ Գարաբազուլպեանները:

Առաջնորդարանի գնահատագրին արժանացաւ Գեմպրիճահայ՝ Տիկին Ազատուհի Փոստաճեանը եւ յատուկ գնահատագիրներ ստացան տեղւոյն պատանիներէն Խաժակ Ասատուրեանը, Շահան Ասատուրեանը, Անդրանիկ Գասամանեանը, Ալէքսան Չագարեանը, Ռազմիկ Կարպուշեանը, Նազիկ Հանէշեանը, Թալին Հանէշեան, Վահէ Մազաքեանը, Հուրի Յովհաննէսեանը, Արա Փոլատեանը եւ Արմէն Փոլատեանը իրենց կիրակնօրեայ սիրայօժար ծառայութեանց եւ նուիրումին Գեմպրիճի գաղութին եւ եկեղեցիին համար:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց Մեծի Տանն կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի Հայրապետական Կոնդակը, ուր ան կը շնորհէր Աւագութիւն՝ Տ. Կոմիտաս Զինյ. Փանոսեանին:

Ձեռնարկի աւարտին խօսք առաւ Վսեմաշուք Հաւատարմատարը ու ապա Առաջնորդ Սրբազան Հայրը պահպանիչով փակեց երեկոն: